Մրցույթի հակիրճ նկարագրությունը

Մրցույթի շրջանակներում Mastercard Standard և Mastercard Gold քարտերի քարտապանները մրցույթի շրջանակներում իրականացնում են անկանխիկ գործարքներ: Առավելագույն գումարային ծավալով գործարքներ կատարած քարտապանները հնարավորություն են ստանում շահել մրցանակներ՝ ուղևորություն դեպի Դուբայ 2 անձի համար և այլ արժեքավոր նվերներ:

Մրցույթի պայմանները

- Մրցույթի ժամկետ՝ 22.11.2023 – 31.12.2023թթ.:
- Մրցույթի հաղթող են ճանաչվում այն քարտապանները, որոնք մրցույթի ընթացքում կկատարեն առավելագույն գումարային ծավալով անկանխիկ գործարքներ իրենց Mastercard Standard և Mastercard Gold քարտերով ՀՀ տարածքում և արտերկրում:
- Մրցույթին կարող են մասնակցել բոլոր քարտապանները, որոնք ունեն գործող Mastercard Standard և Mastercard Gold քարտեր, ինչպես նաև այն քարտապանները, որոնք մրցույթի անցկացման ընթացքում ձեռք կբերեն նոր Mastercard Standard և Mastercard Gold քարտեր (մասնակիցն այլ քարտի քարտապան չպետք է հանդիսանա):

Գործարքների և քարտերի նկատմամբ պահանջներ.

- Մրցույթի շրջանակներում հիմք են ընդունվում բոլոր անկանխիկ գործարքները (այդ թվում ինտերնետային խանութներում և օնլայն մարքեթփլեյսերում), բացառությամբ՝ կոմունալ վճարումների, քարտից և քարտային հաշվից փոխանցումների, մոլախաղերի/վիճակախաղերի հետ կապված գործարքների, պետական բյուջե կատարված վճարումների, ինչպես նաև՝ էլեկտրոնային դրամապանակների լիցքավորման և ֆինանսական հաստատությունների վճարների (օրինակ՝ վարկերի մարումներ, հաշվից/քարտից փոխանցումներ և այլն):
- Մրցույթի շրջանակներում դիտարկվում են այն անկանխիկ գործարքները, որոնց դեպքում 1 գործարքի նվազագույն գումարը կազմում է 5,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ, իսկ առավելագույն գումարը՝ 500,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ:
- Նույն հաճախորդի անունով մի քանի Mastercard Standard և Mastercard Gold քարտերի առկայության դեպքում յուրաքանչյուր քարտի գործարքների ծավալը դիտարկվելու է առանձին: Այսինքն՝ նույն հաճախորդի անունով մի քանի Mastercard Standard և Mastercard Gold քարտերով գործարքների ծավալները չեն գումարվելու իրար:

Մրցույթի ամփոփումը.

- Մրցույթի տվյալները Բանկն ամփոփում է մրցույթի ժամկետի ավարտից հետո 8 աշխատանքային օրվա ընթացքում:
- Մրցույթի գործողության ընթացքում Բանկը կարող է տեղեկացնել քարտապաններին, որ իրենք տվյալ ժամանակահատվածում գտնվում են գործարքների ծավալով առաջին 20-յակում: Ընդ որում, եթե նման զանգի ժամանակ հաճախորդը հայտնում է, որ հետաքրքրված չէ մրցույթին մասնակցությամբ, տվյալ հաճախորդը մրցույթի մասնակից անձանց ցանկից դուրս է գալիս, և մինչև մրցույթի ավարտը վերջինիս քարտային գործարքներն այլևս չեն դիտարկվում:
- Մրցույթի ամփոփումից հետո Բանկի Կոնտակտային աշխատակիցը կապ է հաստատում Հաղթող մասնակցի հետ, տեղեկացնում մրցանակի մասին և հրավիրում Բանկ անհրաժեշտ փաստաթղթերը ստորագրելու համար:
- Եթե որևէ պատճառով Հաղթող մասնակիցը հրաժարվում է մրցանակից, կամ վերջինիս հետ հնարավոր չէ կապ հաստատել Բանկում նշված հեռախոսահամարով 3 փորձից հետո (զանգերը կատարվում են 2 հաջորդող օրերի ընթացքում առնվազն 2 ժամ ընդմիջումով), Հաղթող քարտապանի մրցանակը չեղարկվում է և հաղթող է ճանաչվում առավելագույն գումարային ծավալով գործարքներ կատարած հաջորդ քարտապանը:

Մրցանակները

- Գլխավոր մրցանակ – ուղևորություն Դուբայ 2 անձի համար (3 օր՝ հունվարի 12-14, ներառյալ՝ ԱՄԷ վիզա, Երևան – Դուբայ – Երևան ավիատոմս, տրանսֆեր, հյուրանոց՝ 2 անգամյա սնունդով, հանրահայտ La Perle շոու ծրագրի մասնակցություն հատուկ ընթրիքով): Մրցանակը ստանում է մրցույթի պայմաններին բավարարող պայմաններով Mastercard Standard և Mastercard Gold քարտերով առավելագույն գումարային ծավալով անկանխիկ գործարքներ կատարած 1 քարտապան,
- PlayStation 5 - մրցույթի պայմաններին բավարարող պայմաններով Mastercard Standard և Mastercard Gold քարտերով կատարված առավելագույն գումարային ծավալով անկանխիկ գործարքներով 2-րդ տեղը զբաղեցրած 1 քարտապան,
- AirPods Max - մրցույթի պայմաններին բավարարող պայմաններով Mastercard Standard և Mastercard Gold քարտերով կատարված առավելագույն գումարային ծավալով անկանխիկ գործարքներով 3-րդ տեղը զբաղեցրած 1 քարտապան,
- EVOCA GIFT 50,000 ՀՀ դրամ արժողությամբ նվեր քարտեր - մրցույթի պայմաններին բավարարող պայմաններով Mastercard Standard և Mastercard Gold քարտերով կատարված առավելագույն գումարային

ծավալով անկանխիկ գործարքներով 4-10-րդ տեղերը զբաղեցրած 7 քարտապան,

Ակցիային չեն կարող մասնակցել.

- Mastercard Standard և Mastercard Gold քարտերից բացի այլ քարտերի քարտապանները, Բանկի աշխատակիցները, Բանկի հետ դատական պրոցեսում գտնվող քարտապանները, Բանկի հանդեպ ժամկետանց պարտավորություն ունեցող դասակարգված քարտապանները, Բանկի անվտանգության ստուգումը չանցած քարտապանները:

Ուշադրություն!

- Տվյալ ակցիայի շրջանակներում 1 հաճախորդը կարող է ստանալ միայն 1 մրցանակ:
- Մրցանակը չի տրամադրվի, եթե գործարքները, որոնց հիման վրա հաշվարկվել է քարտային գործարքների ծավալը, չեղարկվել են:
- Մրցանակը չի տրամադրվի, եթե գործարքները կատարվել են քարտապանի հետ փոխկապակցված ընկերությանը պատկանող առևտրի և սպասարկման կետում:
- Մրցանակը չի տրամադրվի, եթե քարտը/քարտերը, որոնցով կատարված գործարքների դիմաց կուտակվել են բոնուսային միավորներ, cashback-ի տրամադրման պահին փակված են (բացառությամբ եթե քարտը վերաթողարկվել է):
- Մրցանակների քանակը սահմանափակ է: Ոչ գումարային մրցանակները ենթակա չեն գումարով փոխանակման:
- Մրցանակը տրամադրվում է միայն քարտապանին, այսինքն՝ այն չի հանձնվում երրորդ անձանց:
- Բանկը պատասխանատվություն չի կրում հաճախորդի կողմից սխալ կոնտակտային տվյալների տրամադրման, դրանց փոփոխության և Բանկում ընդունված պատշաճ կարգով չտեղեկացման համար: